

ՀԱՅ ԵՎ ՌՈՒՍ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՋԱՐԱՄՅԱ ԼԵԳԵՆԴԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. ՎԻԿՏՈՐ ԿՐԻՎՈՊՈՒՍԿՈՎԻ «ԽՈՌՎԱՅՈՒՅՁ ՂԱՐԱԲԱՂ»-Ը¹

Զինաիդա Բալայան

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԱրՊՀ*

Ռուսիա՜ն, Ռուսաստան՜ը՝ այդ հզոր, հնամենի, անծայրածիր ու անմեկնելի խորհուրդներով լի, մշակութային, պատմական, ազգագրական, աշխարհագրական, հոգևոր ու աշխարհիկ համճարեղ կոթողների, զարմանահրաշ գյուտերի, մեծ ու աննախադեպ ոգորումների լանդշաֆտը, մեծագույն ոգեղեն տեղաշարժերի երկիրը թանկ է յուրաքանչյուր քաղաքակիրթ ազգության, առավել ևս՝ հայ ժողովրդի համար...

Ով-ով, հայ ժողովուրդն առավել գերազանց գիտի հոգում լույս, ազնվագարմություն, համճար, բարեկամություն ունեցող, այն գնահատող, պահող-պահպանող ժողովրդի մեծությունը...կարևոր չէ՝ նա «փոքրաչափ է», թե հսկայամարմին, կարևորը ոգու հզորությունն է:

Ռուսիա, Ռուսաստան, ռուս ժողովուրդ խոսքերը ոգու ֆենոմենալ հզորություն ունեցող հասկացություններ են: Այդպիսինն է նաև հայ ժողովուրդը...

Ասում են՝ նմանը զնմանեն կրգտանե...

Թերևս լավագույնս է փաստված հոգիներում ազատության հզոր թափ ու տիեզերական լիցք, լու՛յս, սեր, բարեկամություն ունեցող ու պահպանող ռուս և հայ ժողովուրդների սիրո համագործակցության մասին հետևյալը. «Ավելի քան հազար տարի հայ ժողովրդի պատմությունը զարմանալի կերպով ավելի ու ավելի սերտորեն համաձուլվել է մեր ռուսական պատմության հետ, որի ակունքներում են եղել մեծ իշխանուհի Օլգան ու նրա թոռը՝ Կիևի իշխան Վլադիմիր- Մկրտիչը, որի կինը արքայադուստր Աննան էր՝ ծնունդով հայ թագավորական ընտանիքից»², - գրում է Վիկտոր Վլադիմիրի Կրիվոպուսկովը՝ հայ ժողովրդի, արցախահայության հերթական ազնվագույն բարեկամը «Հայաստան, Հայաստան» գրքի՝ հայ ընթերցողներին ուղղված յուր մեկնություններում:

Ահավասիկ, թե՛ Ռուսաստանը հայ ժողովրդի և թե՛ Հայաստանը ռուս մեծ ժողովրդի համար եղել են (բոլոր օղակներում, բոլոր ժամանակ-

¹ Հողվածն ընդունվել է 18.08.13:

² Գողվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ հայ գրականության եւ լրագրության ամբիոնը:

² Կրիվոպուսկով Վ., Հայաստան, Հայաստան, «Եղիցի լույս», թիվ 10, 2007, էջ 4:

ներում) փոխադարձ հարգանքի, սիրո, հավատարմության, համագործակցության անմրցելի, անգերազանցելի ուսուցարան, մեկնարան:

Մի փոքր պատմական շեղումով նկատենք հետևյալը. Հայաստանը, հայ ժողովուրդը, ընդհանրապես Անդրկովկասը՝ որպես համաշխարհային քաղաքակրթության թեժ, հնամենի ու մայր զարկերակները մեկը, գուցե առաջինը (ես այսպես կասեի), հետաքրքրել է շատ ժողովուրդների, երկրների, տարբեր մասնագիտության տեր մարդկանց: Հետևենք ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս.Ն. Սարինյանի դիտարկումներին. «19-րդ դարակզբին Անդրկովկասը ինչ-որ չափով «համաշխարհային» ուշադրության առարկա էր դառնում. Եվրոպայի և Ռուսաստանի մտավոր շրջաններում հետաքրքրություն է առաջանում դեպի այդ հինավուրց երկիրը, իրար են հաջորդում հնէաբանական և երկրաբանական արշավախմբերը, բիբլիական Մասիսը գայթակղում է Արևելք թափանցող ճանապարհորդներին, իսկ էջմիածինը՝ բնօրրանի միակ մտավոր կենտրոնը, հանգրվան էր դառնում օտար շրջելների համար: Բայց «քաղաքակրթության մայրցամաքից եկած մարդիկ իրենց հետ նաև գաղափարներ էին բերում...»¹:

Եվ դեպի Անդրկովկաս շարժվող մտավոր այդ հոսքը երևելի մարդկանց առաքելությունների մղեց, անգուգական ու տաղանդավոր գրական երկերի տարածանք, արվեստի տարաբնույթ արժեքների ծնունդներ արձանագրեց...

Ժամանակաշրջանը՝ 19-րդ դարասկիզբը, ուներ յուր խոցերը և ոգեղեն ժայթքումները, նաև ժամանակաշրջանը ծնեց մտքի, վրձնի, խոսքի, ձայնի տիտաններ...

Հատկապես 1820-1830-ական թթ. խոշոր գրական գեղարվեստական, քննական, հրապարախոսական, տեսական միտքը առանձնանշող ժամանակներ էին հատկանշում ռուս իրականության մեջ: Դրանք միաժամանակ, Պուշկինյան և Գոգոլյան ժամանակաշրջաններ էին կոչվում՝ ոգեկոչող և քննամիտող...

Սակայն ցարիզմը ևս ուներ յուր նպատակաուղղված քաղաքականությունը: Գրականագետ Ա. Տերտեռյանը վկայում է. «Թե՛ Թաղիադյանը, թե՛ Աբովյանը և թե՛ հայ ժողովրդի առաջավոր մասսաները ռուս տիրապետությունը ողջունում էին իբրև եվրոպական կուլտուրային հաղորդակից լինելու մի ճանապարհ, բայց և ցարիզմը իրեն խայտառակ կերպով բացահայտեց, հիասթափություն առաջ եկավ այն պատճառով, որ նկա-

¹ Սարինյան Ս., Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966, էջ 128:

տեցին, թե Նիկոլայան ռեժիմը արևմտյան առաջավոր մտքի հալածողն է՝ իբրև ժանդարմ»¹:

19-րդ դարի առաջին կեսերից սկսած՝ Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում ռուս մեծ քննադատների, բանաստեղծ-գրողների հետ միասին սովորել են հայ մշակույթի շատ ներկայացուցիչներ: Նրանք շփվել են ռուս մտավորականության, արվեստի գործիչների հետ, մասնակցել գրական խմբակների, հավաքույթների: Ռուս գրականության, արվեստի մասին Մոսկվայի համալսարանի ուսանող, Բելինսկու, Չերնիշևսկու, Օգարյովի ժամանակների ուսանող, Բելինսկու դասընկեր Սարգիս Տիգրանյանը 1834թ. Մոսկվայում հրատարակում է Ռասինի «Գոթոդիայի» յուր թարգմանությունը՝ ընդգծած առաջաբանով, որտեղ հեղինակը տեսական մեկնության է ենթարկում ոչ միայն եվրոպական, այլև ռուսական դրամատուրգիան, քննում Լոմոնոսովի, Տրետյակովսկու, Կնյաժնիի, Խերասկովի, Մայկովի, Օգերովի ստեղծագործությունները՝ դրանք գնահատելով հետաքրքիր մեկնություններով:

Իսկ Անդրկովկասը չէր դադարում ցանկալի ու հետաքրքիր լինելուց: Վկայություններից մեկն էլ Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի արշավախումբն էր՝ դեպի Լեռինք լեռանց՝ վեհատեսիլ Արարատի հաղթահարմանն ուղղված, որին ուղեկցեց հայ մեծ դեմոկրատ, քննադատ, լուսավորիչ, հայ նոր աշխարհաբար լեզվի, հայ նոր գրականության, հայ դեմոկրատական մանկավարժության հիմնադիր, Անդրկովկասից Սիբիր աքսորված առաջին քաղաքական աքսորական Խ. Աբովյանը, որի վիրամատյանը՝ «Վերք Հայաստանին», հայ և ռուս ժողովուրդների բարեկամության, սիրո համագործակցության, ռազմական սխրանքների վիպական ու պատմական մի հրաշակտոր է հանդիսանում:

19-րդ դարի երկրորդ կեսի ռուսահայոց գրականության պատմության մշակութային, գրական, հրապարակախոսական, բանասիրական, ազգագրական, քաղաքական, մատենագիտական, հրատարակչական, զինվորական, մանկավարժական գործիչ Միքայել Միանսարյան(ց)ը (1830-1880, ծնվել է Թիֆլիսում) բազմաթիվ այլևայլ գրքերի հետ հրատարակել է անչափ արժեքավոր «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտություն» աշխատությունը, որում ներկայացված և առանձնադիտված են ավելի քան 6000 գրքեր, հողվածներ ու այլակարգ նյութեր՝ հայերեն, ռուսերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլևայլ լեզուներով: Այդ մատենագիտական մոնումենտալ գրքում մեկնաբանված են նաև ռուս գրականության ներկայացուցիչ, հետազոտող, տեսաբան, պատմաբան, գրող,

¹ Տրետյան Ա., Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունը, Երևան, 1941, էջ 43:

պրոֆեսոր Պլատոն Ջուբովի աշխատությունները, գեղարվեստական երկերը, որոնք ամփոփված են Մ. Միանսարյանի վերոհիշյալ աշխատության մատենագիտության 362, 678, 736, 745, 756 երեսներում: Նշենք, որ Պլ. Ջուբովի աշխատությունների ցանկում կա հատուկ նշանակության մի գիրք, որի գեղարվեստական ու պատմական ծիրի վրա մեկնության է դրված Ղարաբաղի մեղիքության ժամանակների պատմագեղարվեստական նկարագիրը:

Պ. Ջուբովի գիրքը ունի «Ղարաբաղի աստղագետը կամ Շուշի բերդի հիմնարկութիւնը 1752 թվականին», ապա՝ «Անդրկովկասեան պատմական վեպ» վերնագիրը: Բաֆֆին 1882թ. այն թարգմանում է հայերեն և գրում «Թարգմանչից» առաջաբանը՝ կցելով գրքին, որտեղ նա Ջուբովին անվանում է «հարցասեր» գրող:

Ռուս գրողի նյութը պարունակում է 1745-1826-28թթ. Ղարաբաղի պատմության տխուր ու դրամատիկական անցքերը:

Գրքում մեկնված են հայ-ռուս ժողովուրդների բարեկամությունը, ռուս-պարսկական պատերազմի նկարագրությունները, արցախահայ և ռուս զինվորականության ռազմական հերոսական դրվագները մի ընդհանուր թշնամու՝ Պարսկաստանի դեմ... Բաֆֆին ցավով նշում է, որ «Ղարաբաղի աստղագետի» նյութը «ամբողջապես նուիրված է Ղարաբաղում կատարված տխուր անցքերին»¹:

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության պատմությունը տարբեր ժամանակաշրջաններում երևելի մտավորականների, արվեստի գործիչների հետաքրքիր շարք է ներկայացրել. այն, անշուշտ, առինքնող է՝ Գրիբոյեդով, Պուշկին, Պուշկին, Լերմոնտով, Տոլստոյ, Չերնիշևսկի, Դոբրոլյուբով, Օգարյով, Բրյուսով, Մանդելշտամ, Գորկի, Եսենին, Գորոդեցկի, Ա. և Գ. Նույկիններ, Գայդար, Օսոցկի, Չերնիչենկո, Բակշի, Պոնոմարյով և շատ ու շատ նվիրյալներ...

Հայ ժողովրդի, արցախահայության համար ևս մեկ նվիրական անուն առանձնանշենք՝ Վիկտոր Վլադիմիրի Կրիվոպոլսկով՝ բանասեր, իրավաբան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Ռուսաստանի տարածքային ակադեմիայի իսկական անդամ, ՀՀ ԳՄ անդամ, Հայաստանի հետ բարեկամության ու համագործակցության ռուսաստանյան ընկերության նախագահ և այլն և այլն, երևույթ, ում շնորհված

¹ Ջուբով Պլ., Ղարաբաղի աստղագետը կամ Շուշի բերդի հիմնարկութիւնը 1752թ.: Անդրկովկասեան պատմական վեպ, թարգմ. Բաֆֆի, Թիֆլիզ, Կովկասի կառավարիչ գլխ. կառավ. տպ., 1882, արտատպված «Մշակ» լրագրից, էջ 1:

բարձրագույն պարզներից, շքանշաններից ամենակարևորագույնը, թերևս, «Ժողովուրդների բարեկամության» շքանշանն է:

Ոսկե շղթան շարունակվում է... հայ և ռուս ժողովուրդների բարեկամության վավերամատյանը նորոգվում ու շարունակական նոր էջեր է լրացնում: Վիկտոր Կրվոպուսկով. անհատականություն, որի աշխատանքային հետաքրքիր էջերից մեկը 1990-1991թթ. Խորհրդային Միության ՆԳՆ հետաքննչական խումբն էր Ադրբեջանի տարածքում գտնվող Լեռնային Ղարաբաղում, որի ղեկավարն էր նշանակված նա: Խումբը զբաղված էր նաև միության տարածքում ծագած միջազգային խնդիրների, կոնֆլիկտների լուծմամբ:

Ղարաբաղը ժամանակաշրջանի կոնֆլիկտային տարածքների թեժ գծերից մեկն էր հանդիսանում:

1990-1991թթ. ազգամիջյան դրամատիկ իրադարձությունների մասին է շարադրված Վ. Կրիվոպուսկովի «Խռովահույզ Ղարաբաղ» գիրքը, որտեղ ռուս սպայի օրագրային գրառումներն են՝ կատարված խղճի և մտքի մաքուր թելադրանքով, ազնիվ պահվածքով, ռուս մարդու, սպայի սառը դատողությամբ և նյութի նկատմամբ ներքին ջերմությամբ, Ղարաբաղ երկրի ու նրա մարդկանց նկատմամբ՝ անսքող սիրով ու հարգանքով. «Հին նոթատետրիս մեջ կա մեկը, որի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ունեմ: Այն ամփոփում է իմ դատողությունները կովկասյան ողբերգական իրադարձությունների մասին, որ կտրուկ շրջեց բազմաթիվ մարդկանց ճակատագրերը»¹, - գրում է հեղինակը: Նա՝ ռուս սպան, «Ղարաբաղյան» կոչված նոթատետրի նյութը, կիսատ-պռատ արված արտահայտությունները, տարօրինակ թվերը արժեքավորում է ըստ ամենայնի... «Աչքերիս առաջ կենդանի կանգնում են անծանոթ, բայց սիրելի մարդիկ՝ այրված ու անարգված անարդարացի պատերազմում, որը փաստորեն իր մեջ ներքաշեց բոլորիս»²:

Լուրջ, կողմնորոշվող աչք էր պետք՝ տեսնելու տարածաշրջանի իրական պատկերը, հասկանալու Ղարաբաղի ժողովրդի ու նրա ճակատագրի անցումները:

Անծանոթ լինելով Ղարաբաղ երկրին ու նրա շուրջ ծավալվող իրադարձություններին, այնտեղ ապրող մարդկանց հոգեկերտվածքին՝ ռուս սպան նկատում է. «Շատ դժվար էր ըմբռնել իրադարձությունների էությունը: Հարկավոր էր կողմնորոշվել արագ: Եվ որոշումներ ընդունել ու

¹ Կրիվոպուսկով Վ., *Խռովահույզ Ղարաբաղ*, Երևան, 2008, էջ 3:

² Նշվ. աշխ. էջ 4:

գործել ոչ միայն ստացված հրամաններով: Հարկավոր էր մտածել արագ՝ ենթարկվելով խղճի ու բանականության հրամաններին»¹:

Հայ ժողովրդի բարեկամ, գրող, հայագետ-պատմաբանը՝ Կիմ Բակչին, գիրքը անվանում է «տղամարդկային գիրք՝ գրված փաստերի թափանցիկ, արդարացի լեզվով», իսկ նրա խումբը՝ «տիրոջ աչք»²:

Բակչին ընդգծում է Կրիվոպուսկովի՝ Ղարաբաղում գտնվելու նպատակը, խնդիրները, նրան համարում Մոսկվայի դիտող աչքը տարածաշրջանում, ցույց տալիս «Խռովահույզ Ղարաբաղ»-ի հերոսներին՝ «տարբեր դիրքի ռուս սպաներին», ապա նաև Ադրբեջանի իշխանավորներին ու նրանց՝ Մոսկվայում գտնվող հովանավորներին, որոնց ոհմակը դուրս եկավ Վիկտորի դեմ: Կիմ Բակչին Կրիվոպուսկովի «անտեսանելի հերոսության» մասին է ակնարկում ու հաստատում, թե «Խռովահույզ Ղարաբաղ»-ը օգնում է մեզանից յուրաքանչյուրին կողմնորոշվել Լեռնային Ղարաբաղի ապագայի հարցում», ընդգծում նաև իր ամենակարևորագույն միտքը, թե «Վիկտոր Կրիվոպուսկովի հրաշալի, ազնիվ գիրքը Արցախի օրինակով ուժեղ փաստարկ է ազգերի ինքնորոշման իրավունքի օգտին»³:

Ինչպես ժամանակին Պլ. Ջուբովի գրքի տողերից զգացվում էր հեղինակի ներքին համակրանքը Ղարաբաղի ժողովրդի, նրա ազատասիրական, արդարացի ձգտումների հանդեպ, նույնպես Վիկտոր Կրիվոպուսկովի «Խռովահույզ Ղարաբաղ»-ի էջերը լի են հեղինակի, ռուս սպայի՝ ազատությունը սիրող ու գնահատող մարդու, Ղարաբաղի ժողովրդի արդար պահանջները հասկացողի ու դրանց ճիշտ մեկնաբանություններ տվողի, մասնագիտական բարձր պրոֆեսիոնալիզմով ու սառը դատողությամբ երևույթները մեկնաբանողի և քննողի, ազգամիջյան բարդ հարաբերությունները ընկալողի և վերհանողի, տարածաշրջանի էթնիկ բնիկների արդար պահանջատիրության էությունը լրջորեն արժեքավորողի կերպարի բազմապիսի դրսևորումներ՝ առ Ղարաբաղն ու նրա հեռավոր անցյալը, խռովահույզ ներկան և երազելի ապագան...

Գրքի բազմաշերտ էջերում երևում են նրա հերոսները՝ տարբեր խավերից, տարբեր ազգության ներկայացուցիչներով՝ կուսակցական, պետական, զինվորական, մշակույթի տարբեր գործիչներով՝ ճշմարտախոս, արդարամիտ ու հաճախ էլ դաժան, բանասարկու, խարդախ, տար-

¹ Կրիվոպուսկով Վ., *Խռովահույզ Ղարաբաղ*, Երևան, 2008, էջ 4:

² Նշվ. աշխ, էջ 6:

³ Նշվ. աշխ, էջ 8:

բեր մտածելակերպերով, որոնց մտահորիզոնում աշխարհի թեժ կետը «Ղարաբաղ» պատմական, աշխարհագրական անունն ունի:

Բավական է թերթել գիրքն ու հասկանալի կլինի ռուս բարձրաստիճան պաշտոնյայի, սպայի ցաք ու ցրիվ գրառումներից հառնող Ղարաբաղի ժողովրդի ծանր, փորձություններով լի նկարագիրը՝ ազգային-ազգաբարական պայքարի նախաշեմին, շեմին ու դրամատիզմով՝ պայքարով հերոսականությամբ լի ներկայի պատմության էջերը: Օրագրային դիպուկ, մանրակրկիտ, հաճախ կցկտուր, բայց արժեքավոր քաղաքական երևույթներ բացահայտող գրառումները ներկայացնում են մի տառապած, բայց արդարացի ժողովրդի՝ արցախցու կյանքը, նրա դիմակայող ոգին, հերոսականությամբ լի կամքը, համառությունը, մեծ ու արդար նրա կռիվը:

Վիկտոր Կրիվոպուսկովի գրքի ենթավերնագրերն էլ շատ խոսուն են, ահա նրանցից ոմանք. «ԽՍՀՄ-ի առաջին թեժ» կետը, «Հակամարտություն», «Ընդհատակ», «Պայքար ընդդեմ ահաբեկչության...», «Ժամանակավոր բանտարկության մեկուսարաններ», «Երեք ծորակ», «Ղարաբաղի մասին ստույգ տեղեկություններ կենտրոնին՝ ծածկագրված տեսքով», «Դատական բժիշկ փորձագետ Ռոբերտ Գրիգորյանի սպանությունը», «ԿՐԻԿ-ը Ղարաբաղից Մոսկվա», «Սոււմգայիթի մասին տեղեկությունները կրճատեց «ԽՍՀՄ ՆԳՆ ժողովածու» ամսագրի խմբագիրը», «Կուլցո» օպերացիան հնարավոր չէրավ կանխել», «Բաքվի 1990 թ. հունվարի 20-ի իրադարձությունների մասին. մեկ տարի անց» և այլն, և այլն ...

Սրանք ներկայացնում են խռովահույզ Ղարաբաղն ու նրա ժողովուրդը, նրա ճակատագրի զարմանահրաշ, տխուր, ջլապինդ անցումները, մաքառումները, պրկումները, ոգեղեն, մարդեղեն ժայթքումները, դրանց մի պատառիկն էլ, թվում է, հիշեցնում է Մանդելշտամի «Փայտոնչին», հրկիզվող Շուշիի տխուր պատկերը. թերևս այս անգամ արցախցին հաստատուն կմնա իր ինքնորոշվելու երդման առջև: «Մարդիկ, այդ ի՞նչ եք անում: Ուշքի եկեք, կանգ առեք»: Եվ «սպանված» բառից զոռալ ցանկացող ռուս մայրը՝ Նակագենկոն փաստագրում է. «Գոռալ այնքան բարձր, որ ինձ լսեն ամենուրեք, հայկական ու ազերիական գյուղերում, Բաքվում, Երևանում, Ցխինվալիում և Թբիլիսիում, հատկապես Մոսկվայի՝ բարձրախոսներ դրած դահլիճներում», - սա արդեն Վերֆելի, Մորգենթաուի, Նանսենի, Հիլզենրաթի ու «Վերջին մտքի հեքիաթի» հերոսի ծայնն է, Մարդու ծայնը. «Թող ինձ լսեն և նրանք, ում ես անվանեցի մարդասպաններ»: Չէ որ մենք ամենքս մարդ ենք, չէ որ բոլորս մայրական կաթով ենք

սնվել և ունենք վիթխարի, բարի և սնուցող մայր, որ կոչվում է երկիր»։ Ուս մայրի կոչը համամարդկային մարդասիրական սթափեցնող ծայն է ավա. «Դե՛ ուրեմն, եկեք խոհեմ լինենք։ Եկեք ամենակարճ ավտոմատային կրակահերթը փոխարինենք թեկուզև ամենաերկար և ամենասակավանշանակ խոսքով։ Բանավեճերի մեջ է ծնվում ճշմարտությունը։ Բանավեճերի և ոչ թե՛ փոխհրաձգության»¹, - մայր Ա. Նակագենկոն երկխոսության է կանչում կողմերին՝ բանախոսության, փոխըմբռնման։ Ավադ ...

Հավատալու և համոզվելու համար, թե ով է իր դերակատարությամբ Վիկտոր Կրիվոպուսկովը Ղարաբաղյան վտանգավոր լանդշաֆտում, ընթերցենք իր իսկ տողերը՝ որպես ստույգ ժամանակագրություն – փաստագրություն. «Շտապ կանչ Մոսկվա. ԼԴԽ-ի իրադրության մասին ստույգ ծածկագիրը, որ ես ուղարկել էի Մոսկվա, մեր օպերատիվ-քննչական խմբի անկախությունն արտակարգ իրադրության տարածաշրջանում, ազգամիջյան հողի վրա տեղի ունեցած հանցագործությունների հետաքննությունների ասպարեզում առանձին հրամանատարների և ներքին գործերի զինծառայողների՝ ընդդեմ հայ բնակչության, հակաօրինական գործողությունների խափանումը անձնագրային ռեժիմի ստուգումների ընթացքում, այդ ամենը չհապաղեց անդրադառնալ իմ և Կազմկոմիտեի ղեկավարության՝ ի դեմս Վիկտոր Պետրովիչ Պոլյանիչկոյի ու ԼԴԽ-ի պարետ, գեներալ Վ.Ն. Սաֆոնովի, փոխհարաբերությունների վրա։ Ինձ գրեթե դադարեցին հրավիրել Կազմկոմիտեի և պարետության խորհրդակցություններին... Ոմանք անկեղծորեն խորհուրդ էին տալիս չհակառակել Ղարաբաղի այդ չթագադրված տիրակալներին... Նրանք այստեղ ազատամտություն չեն *հանդուրժի... Վ.Պ. Պոլյանիչկոն, ԽՍՀՄ ՆԳ նախարար Բ.Կ. Պուգոյին հանդիպելիս* բացասաբար էր արտահայտվել Ղարաբաղում իմ գործունեության մասին։ Ամեն ինչից երևում էր, որ ինձ սպառնում էր ժամկետից շուտ հետկանչ՝ Ղարաբաղյան գործուղումից...»², իսկ դա նշանակում էր՝ կոպիտ լրացում զինվորական ծառայողական գրքույկում։

Խորհրդային բարձրագույն մարմինների համար Վիկտոր Կրիվոպուսկովն արդեն անբարեհույս պաշտոնյա էր հաստատված, ինչպես ժամանակին Խ. Աբովյանը՝ ցարական ինքնակալության բարձրագույն մարմինների՝ III բեկենդորֆյան բաժանմունքի ու նրա ղեկավար կոմս բեկենդորֆի և լուսավորության մինստրության ու նրա՝ հազարավոր մղոններ լուսավորությունից հեռու, մինիստր Ուվարովի կողմից։

¹ Կրիվոպուսկով Վ., *Խռովահույզ Ղարաբաղ, Երևան, 2008, էջ 375:*

² Նշվ. աշխ., էջ 138-139:

«Ճնարտության պահը.

Վիկտոր Կրիվոպուսկովի «Օրագրի» կարևոր արժանիքն այն է, որ դա չի շարադրել հետին թվով, փաստերն ու գնահատականները սրբագրելով պատմության հետագա ընթացքին համապատասխան, այլ գրի է առել իրադարձությունները և վերաբերմունքը դրանց հանդեպ անմիջապես այն պահին, երբ կատարվում էին: Եվ այդ վավերականությունն առանձնահատուկ արժեք ունի հատկապես հանուն անկախության Ղարաբաղի ժողովրդի պայքարի առաջին ընդահատակյա փուլի վերաբերյալ»¹, - իրավամբ առանձնանշում է ռուս մեծ գրող, հայ ժողովրդի լավագույն բարեկամ Անդրեյ Նույկինը այդ ամենի ժամանակը անվանելով «Ճնարտության պահը...»:

Իսկ գրքի վերջաբանում տրված՝ *«Շնորհակալություն, Ղարաբաղ»* տողերի շարունակությամբ, արցախահայության կողմից նշեմք մեր բոլորի սրտի խոսքը հայ ժողովրդի, արցախահայության վսեմագույն բարեկամին: *Շնորհակալություն Ձեզ, Տիայր Կրիվոպուսկով՝ Ձեր մարտական ուժեղ ոգու, ճշմարիտ խոսքի և քաղաքական սխրանքի, հայ ժողովրդի հանդեպ ունեցած մեծ հավատարմության համար: Ու մի անգամ ևս ըմբռնեցե՛ք «Խռովահույզ Ղարաբաղ»-ի ու նաև՝ ջլապինդ տողերը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության վերաբերյալ.*

«ՇՆՈՐՀԱՎԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ՂԱՐԱԲԱՂ -

ՌՈՒՄ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՅՄԲԵՐԳԸ

«Այսբերգ»՝ ոչ թե սառնության, այլ համամասնության իմաստով: Սառցե այդ վիթխարիների կայունությունն այն բանում է, որ երևում է ողջ զանգվածի մեկ ութերորդականը միայն: Ռուս-հայկական բարեկամության յոթ ութերորդականը տեսանելի չէ կողմնակի աչքերին, այն գտնվում է ընդհանուր պատմության խորքերում, կրոնների արյունակցության, մշակույթի և փոխադարձ հոգեկան համակրանքի համաձուլվածքի մեջ: Օվկիանոսային այսբերգի յոթ ութերորդականի գույների եփներանգումը վայելում է նա, ով կարողանում է սուզվել ստորջրյա խորխորատները: Խեղդվողներին ստորջրյա այդ գեղեցկությունները միայն ցավ են պատճառում: Մեր ԿՐԻՎ-ի (ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի) անդամներին վիճակվեց խորությամբ զգալ և՛ ցավը, և վայելել գեղեցկությունը»²:

¹ Կրիվոպուսկով Վ., *Խռովահույզ Ղարաբաղ*, Երևան, 2008, էջ 413:

² Նշվ. աշխ., էջ 377:

Тысячелетняя легенда армяно-русской дружбы и Арцахская война: Книга Виктора Кривопускова “Мятежный Карабах”.

Зинаида Балаян

Резюме

Вековая история Армяно – русской дружбы представляет ряд приверженцев. Арцахская война пополнила этот ряд новыми именами (А.Нуйкин, Е. Буркова, К. Бакши, В. Пономарев и многие другие). Среди них можно выделить Виктора Кривопускова. Он известен армянскому читателю как автор ценных книг: “Армения, Армения” и “Мятежный Карабах”.

Из дневниковых записей с подзаголовком “Дневники русского офицера”, В.Кривопусков представляет Карабах со своими проблемами, противостояние арцахского народа, его трудный путь к достижению цели, людей, живущих в Карабахе, их справедливые и непоколебимые раздумья и решения в период межнациональной борьбы, преследования и гонения со стороны высших властей.

Thousand-year Legend of the Armenian-Russian Friendship and Artsakh war: The Book "Rebellious Karabakh" by Viktor Krivopuskov

Zinaida Balayan

Summary

The Armenian – Russian relationship have a long history, which introduced an interesting line of adherents.

The Artsakh war added to this line many new names as (A.Nuikin, E. Burkova, K. Bakshi, V.Ponomarev and many others). Among them one can single out Victor Krivopuskov. He is famous to Armenian reader as the author of valuable books “Armenia, Armenia” and “Rebellious Karabakh”.

From diary notes with subtitle “From russian officer’s diary V.Krivopuskov presents Karabakh with his problems, the confrontation of Artsakh people, the long and difficult way of their decision, Karabakh, with fair and steadfast thoughts, decisions, during the liberation struggle and pursuits and banishments from the highest power.